ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2026 թվականի մայիսի 13-ի թիվ 1 որոշմամբ և հրապարակվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը **ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-19/26**

«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ կարիքների համար <<Կուտակիչներ, չվերալիցքավորվող և գալվանական մարտկոցներ>>-ի ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-19/26 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 2026թ. մայսի 12-ին ստացված հարցադրումները և դրանց վերաբերյալ 2026թ. մայսի 13-ին տրամադրված պարզաբանումները՝

Հարցադրում N 1

ՀՀ ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների համար առաքման պայմաններ սահմանելով՝ դուք ստեղծում եք անհավասար մրցակցային միջավայր ՀՀ ռեզիդենտների և այլ երկրների ռեզիդենտների միջև, քանի որ ՀՀ ռեզիդենտները պարտավոր են վճարել ԱԱՀ, մաքսային տուրքեր, բրոկերային միջնորդավճարներ և նշված հասցեով առաքման արժեքը: Ոչ ռեզիդենտների համար այս ծախսերը կրում էպատվիրատուն: Հավասար մրցակցային պայմաններ ստեղծելու համար առաջարկում ենք ոչ ռեզիդենտների համար սահմանել **DDP (Daily Deployment Delivery)** առաքման պայմանները՝ համաձայն INCOTERMS 2020-ի:

ՀՀ ոչ ռեզիդենտ մատակարարի դեպքում՝ միջազգային առևտրի պալատի կողմից սահմանված Incoterm 2010, CIP պայմաններով, Հայաստանի Հանրապետություն՝ մինչև Զվարթնոց օդանավակայան մաքսային տերմինալ: Ապրանքների մաքսազերծումը և տեղափոխումը «Հայաէրոնավիգացիա» ՓԲ Ընկերության պահեստ կատարում է Պատվիրատուն:

Պարզաբանում N 1

Առաքման պայմանների (Incoterms) վերաբերյալ.

Հայտնում ենք, որ հրավերով ոչ ռեզիդենտ մասնակիցների համար սահմանված **«Incoterms 2010, CIP»** պայմանը (ներկայացված է Հավելված 1) փոփոխման ենթակա չէ: ՀՀ գնումների մասին օրենսդրության համաձայն՝ ոչ ռեզիդենտ կազմակերպությունները չեն կարող ՀՀ տարածքում հանդես գալ որպես ներմուծող և իրականացնել մաքսազերծման գործառույթներ (ինչը պահանջվում է DDP պայմանի դեպքում): Մրցակցային հավասար պայմաններն ապահովվում են հայտերի գնահատման փուլում՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն (գնային առաջարկների համադրումն իրականացվում է առանց ԱԱՀ-ի հաշվարկման):

Հարցադրում N 2

<u>Վճարման ժամանակացույցով նշված է 100 տոկոս վճարում սկսած հունիս 2026թ. Այն ապրանքների համար, որոնց մատակարարումը նշած է նոեմբեր 2026թ. հնարավոր է ապրանքները մատակարարել ավելի կարճ ժամկետներում:</u>

Պարզաբանում N 2 **Մատակարարման և վճարման ժամկետների վերաբերյալ.**

Տեղեկացնում ենք, որ հրավերով սահմանված մատակարարման վերջնաժամկետից (նոյեմբեր 2026թ.) **ավելի վաղ ժամկետում ապրանքների մատակարարումը թույլատրվում է:**

Պատվիրատուն («Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ) ունի համապատասխան պահեստային տարածք և տեխնիկական հնարավորություն ապրանքներն ավելի վաղ (այդ թվում՝ հունիս 2026թ.) ընդունելու համար:

Քանի որ գնման ընթացակարգի վճարման ժամանակացույցով 100% ֆինանսավորումը

նախատեսված է սկսած հունիս 2026թ.-ից, ապրանքների վաղաժամկետ մատակարարման և երկկողմանի հանձնման-ընդունման արձանագրության սահմանված կարգով ստորագրման դեպքում՝ վճարումը կիրականացվի հունիս ամսից սկսած՝ ըստ փաստացի մատակարարման:

3. Պայմանագրի նախագծի և վերջնական ժամանակացույցի վերաբերյալ.

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ հրավերով ներկայացված փաստաթուղթը հանդիսանում է **պայմանագրի նախագիծ**: Գնման ընթացակարգի արդյունքում ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքելու դեպքում, հիմք ընդունելով վերջինիս կողմից առաջարկվող մատակարարման կոնկրետ ժամկետները, վճարման և մատակարարման ժամանակացույցերը պայմանագրում կներկայացվեն հստակեցված և ամբողջական տեսքով՝ համապատասխանեցվելով Ձեր կողմից նշված վաղաժամկետ մատակարարման հնարավորությանը:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-19/26 ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Հասմիկ Հակոբյանին-ին:

Հեռախոս՝ +37491 78 11 54:

Էլեկտրանային փոստ՝ hasmik.hakobyan@armats.am

ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-19/26 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը՝

Հ. Սարգսյան		Հանձնաժողովի նախագահ
Մ.Նազարյան		Հանձնաժողովի անդամ
Է. Հակոբյան		Հանձնաժողովի անդամ
Ա. Վարդանյան		Հանձնաժողովի անդամ
Հ. Մաթևոսյան		Հանձնաժողովի անդամ
Հ.Հակոբյան		Հանձնաժողովի քարտուղար